ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Ε/40/214-23 առ "31" 01 2023թ.

«Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝
պրն. Հ. Քոթանջյանին

№ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/22-02/12 պայմանագիրը
միակողմանի լուծման մասին

Հարգելի պարոն Քոթանջյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր մասնաշենքի (ԳՄ) տեղային գոտու ինժեներական ցանկապատի պարագծի երկայնքով բետոնե ճանապարհի իրականացման աշխատանքների կատարման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2022թ. հունիսի 16-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/22-02/12 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույց) աշխատանքների կատարման ժամկետ է սահմանված «մուտքի թուլտվություն ստանալու օրվանից 60 օրացուցային օր»՝ մինչև 18.10.2022թ.: Սակայն մինչ օրս աշխատանքները Ձեր կողմից ավարտված չեն:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն «Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:»

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները (մասնավորապես 2.1.3 կետի «բ» պարբերությունը), տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Վի Քեյ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2022թ. հունիսի 16-ին կնքված №ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-14/22-02/12 պայմանագիրը:

Հարգանքով,

ԳՏՏ-ԸՀԳՏ
պարտականությունները և
լիազորությունները կատարող՝ **Ա. Գասպարյան**

Կազմեց՝
Հ. Ռամազյան
ԳԸԲ գլխավոր մասնագետ
Հեռ. 010-20-04-91